

քով և Տարսիսացի Մելիտոն ամիրայի ծախքով, և նորոգուած է 1812 թուին թէոքորոս Վանեցի պատրիարքին օրով:

Ակսինք այժմ սրբավայրերու նկարագրութեան. եկեղեցւոյն ձախակողմը, հարաւային պատին մէջտեղը, Գլխաղիբի մատուռին դէմ, ընդարձակ և զարդարուն գուռ մը կայ: Ասկէ կը մըտցուի Ս. Էջմիածին եկեղեցին, որ կը տարածուի մայր տաճարի երկայնութեամբ. մեծ դուռը աւելի զարդարուն է դէպէ մայր տաճար մտնելուն կողմը, իբր զի այս է եղեր նախապէս Գլխաղիբի աւագ դուռը, ասկէց ուխտաւորք եւ ժողովուրդք տաճար կը մտնեն եղեր: Ինչ որ այժմ Ս. Էջմիածին եկեղեցի է, առաջ ժամանակներ երեսը բաց գաւիթ է եղեր, որուն կամարները հիւսելով եւ ներսն ալ յարդարելով եկեղեցի ձեւակերպուած է Շղիազար Այնթապցի պատրիարքէն. երբ ան կ'ուզէր հակաթու կաթուղիկօսութիւն մը ստեղծել Երուսաղէմի մէջ, օգտուելով պարագաներէն: Ս. Էջմիածին եկեղեցիին զարդերը աւելի յառաջ տարուած են Շղթայակիրին օրով, երկու եկեղեցիներու միջեւ եղող դրան փեղկերը կեսարացի Ղանտիլ վարպետին եւ իր աշակերտին Տ. Յովակիմեան Սարգիս վարպետին յիշատակներն են, նուիրուած 1711ին: Հաննէ կը վկայէ թէ Շղթայակիրը վիզէն անուրը հանելուն ի յիշատակ 1726ին կազմեց Ս. Սինայի սեղանը Էջմիածնի եկեղեցւոյն հարաւային պատին ներքեւ. այն երեք մեծ քարերուն վրայ, որոնք յիշատակ բերուած էին Սինա և Թարթոր լեռներէն և Յորդանանի գետէն. և ուխտաւորներուն համար այդ հեռաւոր սրբավայրերուն կարօտը կը յագեցնեն: Այդ քարերը այժմ ալ կը տեսնուին երկաթեայ թելէ հիւսկէն ներով պատած: Սինայի սեղանը շատ փոքր է եւ միասին. եւ այդ միակ սիւնին խոյակին ներքեւ տեսնուած երկաթեայ մեծ օղակը Շղթայակիրին անուրն է անշուշտ, բայց մենք տարբեր ազբուրէ մը կը ծանօթանանք թէ, ըստ Սարգիս վրդ.ի Երուսաղէմեաց նորագիտ պատմութեան (1683, ձեռ. Յ. Քիւրտեանի) Շղթայակիրէն յառաջ նոյն տեղը գոյութիւն ունէր Ս. Սինայի սեղանը ի յիշատակ այն սրբազան երեք քարերուն զոր հրեշտակը բերած էր Ս. Աստուածածնի մօտ, ի գոհացումն նոյն վայրերու կարօտին: Շղթայակիրը 1733ին նոյն տաճարին գեղակերտ խաչկալը, և 1742ին ալ մարմարեայ բեմը շինել տուաւ, երկուքն ալ Սեղբոս ամիրային ծախքով: Ս. Էջմիածնի տաճարին պատերն եւս